

Տ. ՏԻՐԱՅՐ ԱՐԹԵՂԻՄԿՈՂՈՍ ՄԱՐՏԻԿՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ ՈՒԽՏԻ ՂԱՏԱՐԱԳԻՆ

(15 հունիսի 2003 թ.)

Միքելի հավաքացյալներ, կապրինք աշխարհի մը մեջ, ուր մարդիկ կ'աշխատեն զիրար, աշխարհի մը մեջ, ուր գիտությունն առաջ կընթանա սրընթաց, աշխարհի մը մեջ, երբ մարդիկ խեթով կ'նային իրարու: Կստեղծվին նոր տեսություններ, նոր նշանաբաններ, նոր պայմաններ: Կմեռնին թագավորություններ, կ'ծնին նոր պետություններ, և այս արևին փակ աճն օր, ամեն ժամ և ամեն վայրկյան բան մը կ'փոխվի, նույնիսկ մարդ արարածը կ'փոխվի:

Միակ բանը, որ կ'մնա հասարակարգի և անխախտ, մեր քրիստոնեական հավաքքն է: Եվ այս հավաքքին հնաբույր 1700 փարիներու պատմություն ունեցող փառաբան մեջ երբ ուխտի եմ եկած, երբ Աստուծուն ճանչցա ճիշտ այս փառաբան մեջ, կուգամ հանուն ռոմանախայերու և բուլղարախայերու ողջունելու ձեզ բոլորը: Գաղութն մը կուգամ, որ ամենախիներեն մեկն է և ամենաերկարակյացներեն: Իրմե առաջ և իրմե հետո շատ գաղութներ գոյություն ունեցան, սակայն անոնք դժբախտաբար հեռացան Մայր Եկեղեցին և ցամքեցան: Օրինակ՝ Թրանսիլվանիոյ հայությունը, Լեհաստանի հայությունը: Ռոմանիո և Բուլղարիոյ հայ գաղութները սակայն միշտ փարած մնացին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տեսիլքին և խորհուրդին ու մնացին հայ քրիստոնյա:

Գաղութները հին ըլլան կամ նոր, գաղութները մեծ ըլլան կամ փոքր, անոնք կապված են երկու նվիրական կապերով, որոնցմե մեկն է մեր Հայրենիքը և մյուսը՝ Ս. Էջմիածինը: Ավելի բան ուր դարեր առաջ հայեր քարավան առ քարավան մեկնեցան դեպի Աստուծոյն և Ղրիմ և անցան Եվրոպա, և անոնք փոխանակ իրենց հոգնած մարմնին բարձ մը շինելու՝ շինեցին աղոթքի տներ, որպեսզի ինչ որ բերած էին Մայր Հայրենիքեն՝ Մտերայան լեզուն, մեր հավաքքը քրիստոնեական, մեր ավանդությունները նվիրական և սրբությունները, որպեսզի անոնք ապրին և աճին: Այսօր ալ, յոթ դարեր հետո, Եվրոպայի սրտին մեջ մենք որպես ամբողջ ամուր կպահենք մեր եկեղեցիները, բաց կպահենք մեր եկեղեցիները և լեզուն կպահենք մեր եկեղեցիները:

Ես սիրով կողջունեմ նաև ներկայությունը Բուլղար հայրենիքի դեսպանին և Ռոմանիո հայրենիքի դեսպանին՝ բոլորիդ անունեն շնորհակալություն հայտնելու այն եղբայրական ապաստանի համար, որ փվիք, երբ հայ ժողովուրդն անապատն անապատ կըշվեր, երբ քրիստոնյա աշխարհը, քաղաքակիրթ Եվրոպան իրենց աչքերը փակեցին՝ չտեսնելու համար կոտորվող հայ ժողովուրդի մարտիրոսությունը և ողբերգությունը: Այդ նույն քրիստոնյա տեսություններն իրենց ականջները փակեցին՝ չստելու համար մեր մորթվող զավակներու ճիչն ու աղաղակը: Այդ տեսությունները չակերտյալ քաջություն ունեցան փակելու իրենց սրտի դռները՝ չզգալու համար Արևելքի քրիստոնյա հին ժողովուրդի մը կոտորածը: Եվ ճիշտ այդ պահուն Ռոման հայրենիքը և ժողովուրդը, Բուլղար հայրենիքը և ժողովուրդը ոչ միայն իրենց սրտի դռները բացեցին, այլև բացին իրենց սահմանի դարպասները, և հայերը եկան

խաղաղ անկյուն մը որոնելու, և երբ գտան այդ խաղաղ անկյունը, իրենց շնորհքը, իրենց քրոհները, ի պահանջել հարկին նաև իրենց արյունը փվին Ռուսեն հայրենիքի և Բուլգար հայրենիքի վերագարթոնքի համար:

Միտելի հավաքացյալներ, ժողովրդական առածը կըսես. եթե կուգես ապրիլ երկու կամ երեք փարիններ՝ ցորեն ցանես, եթե կուգես քսան և երեսուն ավելի փարիններ ապրիլ՝ ծառ փնկես, իսկ եթե կուգես հարյուր և ավելի փարիններ ապրիլ՝ դպրոց շինես, իսկ եթե կուգես հազար յոթ հարյուր և ավելի փարիններ ապրիլ՝ եկեղեցի շինես: Ուրեմն այս 1700-ամյա եկեղեցիին Ս. Խոթրանեն ողջունելով ձեզ՝ պիտի հիշեցնեմ, թե խարիսխներեն մեկը, որուն կոթնեց հայ ժողովուրդը, դիմացավ բոլոր աղետներուն և փորձություններուն՝ Ս. Էջմիածինն էր:

Առաքյալներ քրիստոնեական կրոնը բերած էին այսօրեղ, և Քրիստոսի կրոնին սերմերը դիմացան ավելի քան երեք դարեր: Առաջին անգամ այս կրոնը ազապորեն պաշտվեցավ այս եկեղեցու կամարներուն փակ:

Ս. Էջմիածինը հայ ժողովրդի հոգեղեն աշխարհն է: Էջմիածինն է, որ ամփոփեց, հավաքեց և դիմացուց հայ ժողովրդի բոլոր ավանդությունները, քրիստոնեական ոգիով օծեց անոնց և հանձնեց դարերուն:

Կսիսալվին բոլոր անոնք, որոնք պարզ առասպել մը կկարծեն Ս. Գրիգոր Լուսավորչին փեսիլքը: Առասպել մը չէ անիկա, այլ գեղեցիկ ավանդություն, որովհետև Աստուծո Որդին ցանկացավ այնպեղ իջնել, ուր հայ ժողովուրդը ամփոփած է իր բոլոր ավանդությունները, և այդ ավանդություններուն վրա է, որ Հիսուս ուզեց կառուցել այս հողին վրա հայրենի իր անդրանիկ աղոթքի փաճարը:

Կսիսալին նաև անոնք, որոնք կկարծեն, թե հայ ժողովուրդը կպաշտեն Ս. Էջմիածնի քարերը: Այդ շփոթությունն ունեցավ ինքը՝ Շահ Աբաս: Մայր Տաճարեն քարեր փարավ Մալահան՝ զարգացնելու, շենցնելու և ճոխացնելու համար իր երկիրը, սակայն, ինչպես կըսես Ավետիք Իսահակյան, «Էջմիածինը կառուցված է ոչ թե հաստաբեստ սյուներու վրա, այլ հայ ժողովրդի հոգիին և սրբին մեջ, և դրա համար խորփակելի չէ և անսասանելի է»: Ուրիշ բանաստեղծ մը՝ Վահան Թեքեյան, ըսել է, թե «Եկեղեցին հայկական անառիկ բերդն է հայ հոգիին»: Եվ Էջմիածնի բանաստեղծ մըն էլ՝ Հովհաննես Հովհաննիսյան կավեցնես.

Դարեր եկան, դարեր անցան, Էջմիածին,
Քո հիմն անշարժ ու անսասան Էջմիածին:

Հիսուսներեք փարիններ առաջ, երբ ուսանող էի Հոգևոր Ճեմարանում, Ս. Էջմիածնի փոնին Հայաստանի զանազան գյուղերեն կուգային ուխտավոր հավաքացյալներ, ամբողջ գիշերը կերգեին, կպարեին, որոնցմե կհիշեմ մենակ նախադասություն մը Էջմիածնին նվիրված՝ աշուղներու բերանով. «Էջմիածին ուզարդուշա, ուխտավորդ կուգա դռա-դռա»: Էջմիածինը թոչող, սավառնող թոչուն մըն է, և ուխտավորը կուգա վագելով:

Այո՛, Էջմիածինը եղած է մեր մայրը, իր թներուն փակ առած է իր վիրավոր զավակներուն, իր վերջին շուրջառն է պատրած, իր վերջին վեղարն է պատրած՝ սպեղանի և բալասան դառնալու համար իր վիրավոր ձագերուն: Էջմիածինը մեր փառքն է, մեր խիղճն է,

որովհետև ինչ որ ունինք քաղաքակիրթ աշխարհին ներկայանալու, մենք այդ բոլորը սպացանք Ս. Էջմիածնի միջոցով:

Տկարացնել Ս. Էջմիածինը՝ կնաշանակե ստեղծել հայ ժողովրդի ոգին: Էջմիածինը կա և կմնա և պիտի մնա մեր հավաքքի ամենամիտրական սրբություններն, նվիրավայրերն մեկը: Փարած մնանք Ս. Էջմիածնի խորհուրդին, և հոգևորական կամ աշխարհական մեր բոլորի պարականությունը պիտի ըլլա, գերագույն պարականությունը, բաց պահել հայ եկեղեցիները, լեցուն պահել հայ եկեղեցիները, պայծառ պահել հայ եկեղեցիները, որովհետև օտարության մեջ այնքան խայծեր կան մեր հոգին շվարեցնող, մեր հոգին թունավորող, Նայ եկեղեցին է միակ այն վայրը, ուր մեր հոգիները կթարմանան: Վա՛յ այն մարդուն, որ կբաժնվի և կմոռանա եկեղեցիի ճամփան: Օտարները կարիք չունին եկեղեցվո շաղախին իրենց դիմագիծը պահելու համար, բայց վայ հայ քրիստոնյային, որ կհեռանա և կմոռանա եկեղեցիին ճամփան:

Միրելի հավաքացյալներ, անսասան մնա այս հավաքքի փունը իր Հայրապետով, և ես եկած եմ այսօր ո՛չ միայն պարարագելու, ո՛չ միայն ողջունելու ձեզ, այլև հաշի՛վ փալու Ամենայն Հայոց Հայրապետին, հաշի՛վ փալու Ս. Էջմիածնին և ուղիղ նայելու սրբազան մեր լեռան՝ Արարափին: Երեկ հայ քրիստոնյա էիր դու, այսօր հայ քրիստոնյա կշարունակի՞ս ապրի, և շարունակե՞ք հայ քրիստոնյա ապրի, եկող բոլոր սերունդներ: Եվ թող մեր Հայրապետներու հավաքքեն կաթիլ մը, կայծ մը անոնց հայրենասիրությունն իջնե մեր հոգիներուն մեջ, մաքրե և լվա, բյուրեղացնե և գեղեցկացնե մեզի, ավելի հայացնե, ավելի քրիստոնեացնե՝ չօտարանալու և չքարանալու համար, ուստի չծուլվելու համար փարած մնանք մեր Մայր և Սուրբ Եկեղեցիին փեսիլքին և խորանին:

Փառք Ս. Էջմիածնին, անսասան թող մնա այս հավաքքի փունը, և Աստված երկար ընե Վեհափառ Հայրապետին կյանքին օրերը, որպեսզի բազմած Լուսավորչին գահին դեռ շարունակե Հայ Եկեղեցին վարել Արարափի անմիջական շուրթն ներքև այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն: